ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018 թ. մայիսի 11-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2՝ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Նելլի Քոչարյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Աշակերտների առաջադիմության հարցը:

2. Ընթացիկ հարցեր /կարգապահություն,ռեժիմ,հերթապահություն/:

1. **Լսեցին**

Ելույթ ունեցավ դասղեկ Նելլի Քոչարյանը՝ ներկայացվեց տեղեկատվություն յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը:Մանրամասնորեն ներկայացվեց յուրաքանչյուր աշակերտի զրավոր և բանավոր խոսքի վերաբերյալ:

Ծնողներին անհատական ներկայացվեց իրենց երեխաների բացթողումներն ու թերացումները: Դասարանում կան այնպիսի աշակերտներ,որոնք դժվարանում են վարժ կարդալ և գրել:

Ժողովի ընթացքում քննարկվեցին մի շարք խնդիրներ, որոնք պետք է լուծվեն մինչև տարեվերջ: Եղան բազմաթիվ հարց ու պատասխաններ ծնող-դասղեկի միջև:

Որոշեցին

Ավելի հետևողական լինել բարձր առաջադիմություն ապահովվելու համար: Այն ծնողները, որոնց երեխաները ունեն որոշակի թերացումներ, որոշեցին ավելի շատ համագործակցել ուսուցիչների հետ, տանը ավելի շատ աշխատել երեխաների և վերացնել բացթողումները: Կարդալ և գրել դժվարացող աշակերտների ծնողներն էլ խոստացան ավելի ուշադիր լինել իրենց երեխաներին, դժվարության դեպքում փորձել ուսուցիչների հետ միասին կարգավորել ցանկացած հարց՝ կապված թերացումների հետ, համագործակցել դասղեկի հետ և օգնել նրան:

2. **Լսեցին**

Որոշեցին բոլոր հարցերում համագործակցել դասղեկի հետ և օգնել նրան:

3. Լսեցին

Ընթացիկ հարցեր /կարգապահություն,ռեժիմ,հերթապահություն/:

Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով և դպրոցական համազգեստով, ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն, պահեն ծնող-դասղեկ-աշակերտ կապը: Քննարկվեց ընթացիկ հարցեր, որոնք վերաբերվում էին դասագրքերի պահպանմանը, աշակերտների հիգիենիկ վիճակին:Եթե կան աշակերտներ, որոնք ունեն համազգեստի խնդիրներ, մինչև նոր տարվա սկիզբ, լուծել այդ խնդիրները՝ համագործակցելով համապատասխան մասնագետի հետ:

Որոշեցին

Ցուցաբերել ավելի շատ ուշադրություն և հետևողականություն, որպեսզի աշակերտները ներկայանան աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / /Անուշ Ներսիսյան/

Քարտուղար՝ / / Անի Փանոսյան /